Հանրային ոլորտի կատարելություն

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ ՝	Հանրային կառավարում
Տևողություն ՝	18 ամիս
Իրականացման ժամանակահատված ՝	հունիս 2013 – Դեկտեմբեր 2014
Ընդհանուր բյուջե ՝	475,100 եվրո

ՀՀ շահառու հաստատություն՝	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ
Մասնակից երկրներ ՝	Բուլղարիա, Ռումինիա, Մոլդովա, Հայաստան, Ուկրաինա, Թուրքիա

Ծրագրի նկարագրություն

Ընդհանուր նպատակը ՝ Բարձրացնել հանրային ոլորտի վարչական կարողությունները Սևծովյան ավազանի երկրներում՝ խթանելով համընդհանուր որակի հայեցակարգի տարածումը և որակի կառավարման ժամանակակից գործիքների կիրառումը:

Հեռք բերված արդյունքները ՝

- Ներկայացվել է ընդհանուր գնահատման համակարգ (Common Assessment Framework/CAF) ինքնագնահատման մոդելը՝ միտված հանրային կառավարման ինստիտուտների արդյունավետության բարձրացմանը և մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը, Ծրագիրը հնարավորություն է ընձեռել ծանոթանալ որակի կառավարման ժամանակակից մեխանիզմների կիրառման եվրոպական փորձին և տեղայնացնել մոդելի մեթոդաբանությունը,
- Երևանում կայացել է «Քաղաքացիական ծառայության արդյունավետության բարձրացում. ընդհանուր գնահատման համակարգ և շարունակական կրթություն» խորագրով համաժողովը: Համաժողովին մասնակցել են 5 երկրի՝ Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Բելառուսի, ինչպես նաև՝ ԵՄ անդամ երկրների քաղաքացիական ծառայության համակարգող մարմինների պատվիրակներ,
- Իրականացվել են մի շարք վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև՝ ուսումնական այցեր և աշխատանքային հանդիպումներ,
- 2015 թվականի մայիսի սկզբին ՀՀ ՔԾԽ-ն դարձել է Մաաստրիխտում տեղակայված Եվրոպայի հանրային կառավարման ինստիտուտի CAF

ռեսուրս կենտրոնի Հայաստանի ազգային թղթակիցը, ինչը նոր նախադրյալներ է ստեղծել պետական ծառայության որակի գնահատման ժամանակակից տեխնոլոգիաները Հայաստանում տեղայնացնելու համար:

Հավելյալ տեղեկատվություն

Հանրային ոլորտի կատարելություն (http://blacksea-cbc.net/wp-content/uploads/2015/12/fact-sheet-MIS-2670.pdf)